

Ն Ա Խ Ա Պ Ա Շ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք

Մ Ա 2.

Մազի, մօրուքի եւ ըզունկի վրայ զանազան նախապաշարմունքներ կան շատ ժողովրդոց մէջ որ ամէնն ալ հաւաքելը շատ դժուար է. բայց մէկ քանիին ինչ աստիճանի տղայական կամ յիմարական լինելէն կարելի է հասկընալ մէկալներուն ալ ինչ բաներ լինելը:

Մազը տուած է Աստուած մարդուս՝ գըլուխը օգոյն վնասներէն պահպանելու, եւ միանգամայն բնական գեղեցկութիւնը աւելցընելու համար. եւ թէպէտ ամենայն մարդիկ՝ արք եւ կանայք տեղ տեղ ու ժամանակ ժամանակ սովորութիւն ըրած են մազերնին երկընցընել կամ կարճեցընել, եւ կամ այլ եւ այլ ձեւերու բերել, բայց ընդհանրապէս կանայք են իրենց մազերուն վրայ աւելի խնամք ունեցողները, ուստի եւ նոցա մէջ է որ կգտնուին մազի համար տեսակ տեսակ նախապաշարմունքներ, որոց գլխաւորներն այս տեղ դնեմք:

Ա. Կըսեն թէ գեղին մազը գէշ ընուծեան նշան է, իբր թէ գեղին մազ ունեցող մարդը նեղսիրտ, չարամիտ, նախանձոտ, ապերախտ կլինի: Յայտնի բան է որ այս խօսքը բոլորովին անհիմն է. վասն զի, ընդհակառակն, խիստ շատ մարդիկ եղած են ու կան՝ որ մազերնին գեղին է, եւ սակայն իրենք խիստ շատ սեւամազ անձինքներէ աւելի հեղահոգի, բարեսիրտ, քաղցրաբարոյ եւ բարերար ընուծիւն ունին: Փորձով տեսնուած է որ ընդհանրապէս ցուրտ երկիրներու բնակիչները գեղին մազ կունենան, իսկ տաք երկրները սեւ կամ թուխ. ուստի եւրոպացի ազգաց մէջ շատը կան, մանաւանդ հիւսիսային կողմերը, որ գեղին մազով են. իսկ Ափրիկեցիք ու Ասիացիք առ

հասարակ սեւամորթ կամ սեւամազ: Միայն թէ այսչափն ալ ստոյգ է որ ընդհանրապէս գեղին մազ ունեցող անձինք ընուծեամբ հանդարտ ու մաղասային, երկայնամիտ եւ մտածող կլինին, ինչպէս որ սեւ մազ ունեցողներն ալ կրակոտ, անհանգարտ, ու յարմարաւոր, Գիտեմք Տաճկաց այն առակն որ կըսէ. «Ա'լմա սարը, սա'թմա սարը, գափունտա վարըսա ա'թ տըշարը». այսինքն գեղինը ոչ առ՝ ոչ ծախէ, թէ քովդ ունիս՝ դուրս ձգէ. բայց այս առակը խիստ քիչ գեղին մարդկանց կյարմարի, կամ թէ միայն այնչափ ստոյգ է՝ որչափ որ ստոյգ կրնայ համարուիլ միւս ռամկական առակն որ կըսէ «Մազը երկայն, խելքը կարճ»: Վասն զի մազին երկայնութիւնը կամ կարճութիւնը մարդուս խելքին ոչ երկըննալուն եւ ոչ կարճընալուն կնայի. ապա թէ ոչ, ո'վ չգիտեր որ խիստ շատ կարճամիտ ու խենդ մարդիկ կան՝ կարճ մազով, եւ ո'րքան խելացիներ՝ երկայն մազով ու մօրուքով:

Բ. Երկայն մազ սիրողները դրած են մըտքերնին թէ նոր լուսին տեսածնուն պէս՝ եթէ լուսնկային նայելով իրենց մազերուն ծայրէն քիչ մը կտրեն, մազերնին կերկըննայ: — Յայտնի բան է որ լուսնի լոյսը մազ երկընցընելու զօրութիւն պէտք չէ ունենայ. եւ եթէ լրացեալ լուսինը այս զօրութիւնը չունի, նորը՝ ամենեւին: Հապա ինչ կայ. այս ստոյգ է որ ատեն ատեն կամ ամիսը մէկ անգամ մազերուն ծայրերէն մէկ մէկ քիչ կտրելը՝ անոնց երկըննալուն շատ կօդնէ կըսեն, եւ այս հաւանական է. ուրեմն ո'վ որ իւր մազին աւելի երկըննալուն ցանկալով՝ ամսէ ամիս ծայրերը կտրել կուզէ, բաւական է որ օրացոյց նայի, եւ ոչ թէ

լուսնի ծնունդը տեսայ կամ չտեսայ ըսելով՝ փուճ տեղը սիրտ մաշեցընէ :

Գ. Մարգուս մազին կտրտութիւնները ոտքի տակ պէտք չէ ձգել կըսեն. եւ իրաւունք ունին, վասն զի աղտեղութիւն է եւ քաղելու արգելք : Բայց այդ ըսողներուն միտքը այն չէ. կըսեն թէ անպիլի աշխարհքը բոլոր մազիդ կտրտութիւնները կապահանջեն քեզմէ, անոր համար պէտք է առնուս զանոնք բարձրիկեկ պատի մը ծակ դնես : Կերեւի թէ այս ըսողները յոյս ունին իրենց միտքը պահելու յարութիւն առած օրերնին թէ իրենց մազերուն կտրտութիւնը որ աշխարհքին որ քաղաքին որ պատին որ ծակերուն մէջ գրեթէ եւ իրենց մազերը անոնցմով ամբողջացնելու, բայց թէ որքան անտեղի եւ անյարմար նախապաշարմունք է այս՝ տղայոց անգամ յայտնի է :

Դ. Մազը կրակը ձգելը աղէկ չէ կըսեն. ինչո՞ւ ըսես նէ մազին տիրոջը գլուխը կցաւի : Այս ճշմարիտ է որ եթէ մազը կրակաւորանի՝ այսինքն աննկալի եւ կամ թոնրի կըրակին մէջը ձգուի, անոր գարշահոտութենէն հարկաւ գլխացաւ կընայ պատճառիլ ոչ միայն մազին տիրոջը, այլ եւ բոլոր տանը մէջ գտնուողներուն, Բայց թէ որ վառաւորանի՝ այսինքն սոսկայի կամ թէ փռան մէջ ձգուի, ոչ տիրոջը վնաս է եւ ոչ ուրիշներուն :

Ե. Թէ որ մազերը գետինը թաղես՝ օձ կգառնայ կըսեն : Եթէ այս խօսքը ճշմարիտ լինէր՝ սափրիչներուն (պերպրներուն) խառնութիւններուն ու տներուն քովերը բիւրաւոր

օձերով պիտի լցուէին, վասն զի նոցա կտրտած մազերը սովորաբար աղբիւսները (յօտի-շիւները) կձգուին ու գրեթէ կթաղուին : Եթէ մազը օձ գառնալու կարողութիւն ունենար, աւելի հաւանական է որ քանի որ գեռ օձաբարոյ կանանց ու մարդկանց գլխուն վրան է՝ անոնց անղգամութեան ժամանակին օձի կերպարանք կառնուր :

Զ. Եթէ երկայն մազ ունեցողին գլուխը լցուած ջրէն ավիով մը առնուս ու քու գլուխը լեցընես, նորա մազը կկարճնայ ու քու կինդ կերկընայ կըսեն : Կերեւի որ այս նախանձու գործողութիւնը կատարող շատ կգտնուի. բայց իրենց փափագին հասնող խիստ քիչ կամ ամենեւին. վասն զի ուրիշի գլխէն թափելիք մազին ջուրը չեմք գիտեր թէ ինչ յարմարութեամբ սոյն ջուրը առնողին մազին երկայնութիւն պիտի տայ :

Է. Կակուղ մազ ունեցող մարդը՝ խիստ կամ թեք (սէր կամ քիրեաֆի) բնութիւն ունեցող կնկան կհանդիպի կըսեն, նմանապէս անոր ներհակ, խիստ մազ ունեցողը՝ կակուղ բնութեան տէր կնոջ կհանդիպի : Այս նախապաշարման որքան անհիմն եղածը թէպէտ ամէն տեղ եւ ամէն ժամանակ յայտնի է, բայց ասով ալ կիմացուի որ խնամքխօսութիւն ընողներուն բերնէն այս մազի խըստութեան կամ կակղութեան պայմանները ոչ երբէք լսուած են : Այսքանը միայն յայտնի է որ սովորաբար կակուղ մազ ունեցողները՝ կակուղ բնութիւն կունենան, իսկ խիստ կամ կարծր ու գռուղ մազ ունեցողները բարկասիրտ, փոքրոգի եւ կամակոր կըպատահին :

